ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«17» «փետրվարի» 2021 թ. № 53-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N224-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հուլիսի 10-ի «Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի ջրի որակի և պաշարների կառավարմանն ուղղված ոլորտի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 224-Լ հրամանի հավելվածով հաստատված ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-11րդ կետերով.

«

| **N** | **Կապը համաձայնագրի հետ** | **Նախատեսվող միջոցառումները** | **Միջոցառման իրականացմանն ուղղված գործողությունները** | **Միջոցառման ավարտի ժամկետը** | **Ակնկալվող արդյունք** | **Պատասխանատու ստորաբաժանումներ** | **Ֆինանսավորում** |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի 2007/60/ԵՀ հրահանգ՝ հեղեղումների ռիսկերի գնահատման եւ կառավարման մասին (ԵՄ հեղեղումների դիրակտիվ)** | | | | | | | |
| 9. | Հեղեղման ռիսկի նախնական | Հայաստանի հեղեղավտանգ գետավազաններում | Հեղեղավտանգ գետավազաններում | 2023 թ. երկրորդ եռամսյակ | Հեղեղումների ռիսկի նախնական գնահատում | «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի | Պետական բյուջե և/կամ օրենսդրությ |

| N | Կապը համաձայնագրի հետ | Նախատեսվող միջոցառումները | Միջոցառման իրականացմանն ուղղված գործողությունները | Միջոցառման ավարտի ժամկետը | Ակնկալվող արդյունք | Պատասխանատու ստորաբաժանումներ | Ֆինանսավորում |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գնահատման իրականացում (4-րդ և 5-րդ հոդվածներ) | հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում՝ հաշվի առնելով ԵՄ հեղեղումների դիրեկտիվի 4-7-րդ հոդվածների պահանջները և մոտեցումները | հեղեղման ռիսկի նախնական գնահատում՝ հիմնվելով Աղստևի գետավազանում հեղեղումների վտանգի քարտեզագրման նախնական ուսումնասիրության հաշվետվությունում ներկայացված մեթոդաբանության վրա | ակ | ան հաշվետվություն | կենտրոն» ՊՈԱԿ | յամբ չարգելված ֆինանսական միջոցներ |
| 10 | Հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում (6-րդ հոդված) | | Հեղեղավտանգ գետավազաններում հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում՝ օգտագործելով Աղստևի գետավազանում հեղեղումների վտանգի | 2024 թ. չորրորդ եռամսյակ | Հեղեղումների վտանգի քարտեզներ<br><br>Հեղեղումների ռիսկի քարտեզներ | «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ | Պետական բյուջե և/կամ օրենսդրությամբ չարգելված ֆինանսական միջոցներ |

| N | Կապը համաձայն գարի հետ | Նախատեսվող միջոցառումներ ը | Միջոցառման իրականացմանն ուղղված գործողություննրը | Միջոցառման ավարտի ժամկետը | Ակնկալվող արդյունք | Պատասխանատու ստորաբաժանումներ | Ֆինանսավորում |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քարտեզագրման նախնական ուսումնասիրության արդյունքները, մոտեցումները և մեթոդաբանությունը | | | | |
| 11. | Հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում (7-րդ հոդված) | | Հիմնվելով հեղեղումների ռիսկի նախանական գնահատման, ինչպես նաև հեղեղումների և վտանգների ռիսկերի քարտեզագրման աշխատանքների վրա՝ հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում Հայաստանի հեղեղավտանգ գետավազանների համար | 2025 թ. չորրորդ եռամսյակ | ՀՀ կառավարության որոշում՝ հեղեղումների ռիսկի կառավարման պլանների հաստատման մասին | «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ | Պետական բյուջե և/կամ օրենսդրությամբ չարգելված ֆինանսական միջոցներ |

»:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2/17/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«17» փետրվարի 2021թ.
Ք. Երևան